ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Սովորողի ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային պայմաններից է**

1. Հուզազգայական մթնոլորտը
2. Արտադասարանական պարապմունքը
3. Խիստ կարգապահությունը
4. Դասընկերոջ ախատանքի օրինակը

2 **Որ արվեստագետն է համարվում Վաղ վերածնդի ժամանակաշրջանի ներկայացուցիչ**

1. Լեոնարդո դա Վինչի
2. Պաոլո Վերոնեզե
3. Ջոտտո դի Բոնդոնե
4. Սանդրո Բոտիչելլի

3 **Մանկավարժական փորձը վերաբերում է**

1. Ուսումնական նպատակներին
2. Չափորոշիչային պահանջներին
3. Դիդակտիկ սկզբունքներին
4. Հետազոտության մեթոդներին

4 **Ֆրանսիացի որ նկարիչը համարվեց կետանկարչության (պուանտելիզմ) հիմնադիրը**

1. Ժորժ Սյորա
2. Մորիս Դենի
3. Կլոդ Մոնե
4. Էդգար Դեգա

5 **Հովնաթանյան նկարչական գերդաստանի որ ներկայացուցիչն է պատկերել Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը**

1. Աղաթոն Հովնաթանյան (1816-1893)
2. Հակոբ Հովնաթանյան (1806-1881)
3. Նաղաշ Հովնաթան (1661-1722)
4. Հովնաթան Հովնաթանյան (1725-1799)

6 **Կերպարվեստի հիմնական արտահայտչամիջոց են հանդիսանում**

1. Համաչափությունը, կառուցվածքը
2. Հեռանկարը, կրճատումը
3. Գուաշը, մատիտը, պաստելը
4. Գիծը, կետը, գույնը

7 **Որն է համարվում թեմատիկ հորինվածքի հիմնական տարր**

1. Աշխատանքի կոմպոզիցիան
2. Աշխատանքի կոլորիտը
3. Աշխատանքի չափը
4. Աշխատանքային նյութը

8 **Նշվածներից հայկական որ եկեղեցին է համարվում բազիլիկ**

1. Զվարթնոց
2. Տեկոր
3. Կարմրավոր
4. Խորանաշատ

9 **Որն է համարվում Երևանի առաջին արձանը**

1. Ստեփան Շահումյան
2. Ներսոն Ստեփանյան
3. Խաչատուր Աբովյան
4. Ղուկաս Ղուկասյան

10 **Ով է Երևան քաղաքի առաջին արձանի հեղինակը**

1. Անդրեաս Տեր-Մարուքյան
2. Սերգեյ Մերկուրով
3. Հովհաննես Բեջանյան
4. Այծեմիկ Ուրարտու

11 **Ով է առաջին անգամ շրջանառության մեջ դրել Հելլենիզմ տերմինը**

1. Ջորջո Վազարի
2. Ալեքսանդր Մակեդոնացի
3. Բորիս Պիոտրովսկի
4. Յոհան Դրոյզեր

12 **Նշվածներից ով է եղել Պոլսի գեղարվեստի ուսումնարանի հիմնադիրներից և նույն ուսումնարանի քանդակի բաժնի ղեկավարը**

1. Հովսեփ Փուշման
2. Էդգար Շահին
3. Հովսեփ Մանաս
4. Երվանդ Ոսկան

13 **Ով է հանդիսանում նոր շրջանի հայ կերպարվեստում պատմական ժանրի հիմնադիրը**

1. Եղիշե Թադևոսյան
2. Գևորգ Բաշինջաղյան
3. Փանոս Թերլեմեզյան
4. Վարդգես Սուրենյանց

14 **Որտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Քաոս» ստեղծագործությունը**

1. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահ
2. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահ
3. Հայաստանի ազգային պատկերասրահ
4. Դրեզդենի պատկերասրահ

15 **Ով է եղել Գեղարվեստի ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) հիմնադիրը**

1. Արա Սարգսյան
2. Ալեքսանդր Մյասնիկյան
3. Մարտիրոս Սարյան
4. Ասքանազ Մռավյան

16 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների համակարգ չէ**

1. Արժեքային համակարգ
2. Բովանդակային համակարգ
3. Գիտելիքների համակարգ
4. Կարողությունների համակարգ

17 **Հելլենիստական շրջանում որ աստծուն է նվիրված եղել Գառնու հեթանոսական տաճարը**

1. Միհր
2. Խալդի
3. Արամազդ
4. Վահագն

18 **Նշվածներից որը չի համարվում հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացի փուլ**

1. Կրտսեր
2. Ավագ
3. Տարրական
4. Միջին

19 **Որ աստծուն է նվիրված եղել ուրարտական Մուսասիրի տաճարը**

1. Շիվինի
2. Տուրանի
3. Խալդի
4. Թեյշեբա

20 **Ով է եղել Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի հեղինակը**

1. Դմիտրի Մերկուրով և Արա Սարգսյան
2. Փանոս Թերլեմեզյան և Նիկողայոս Մառ
3. Հակոբ Կոջոյան և Ալեքսանդր Թամանյան
4. Մարտիրոս Սարյան և Հակոբ Գյուրջյան

21 **Կերպարվեստ առարկայի ծրագրի տվյալ բաժինն ապահովում է գեղարվեստական արտահայտչական միջոցների ընդհանրացված ըմբռնման ձևավորում**

1. Միջմշակութային հաղորդակցության հմտություններ
2. Իրականության ստեղծագործական վերարտադրություն
3. Գեղարվեստական պատկերման յուրահատկություններ
4. Արվեստի կոնստրուկտիվ տեսակներ և միջոցներ

22 **Ինչպիսի հիմնական հմտություններ և կարողություններ են ձևավորվում խմբային աշխատանքի ժամանակ**

1. Համագործակցային աշխատանքի հմտություններ
2. Ստեղծագործական երևակայության հմտություններ
3. Տարածության արտահայտման հմտություններ
4. Հեռանկարային ընկալման հմտություններ

23 **Ում նկարազարդումներով է հրատարակվել հայկական առաջին տպագիր Աստվածաշունչը**

1. Շառլ Դյուպուի
2. Սանդրո Բոտիչելլի
3. Ալբրեխտ Դյուրեր
4. Էժեն Դելակրուա

24 **Հայ արվեստագետներից ով է հանդիսանում իմպրեսիոնիստ նկարիչ**

1. Մինաս Ավետիսյան
2. Ենոք Նազարյան
3. Ստեփանոս Ներսիսյան
4. Եղիշե Թադևոսյան

25 **Հանրակրթական դպրոցում որը չի հանդիսանում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Արվեստի տեսություն
2. Դիզայնի պատմություն
3. Պատկերում բնօրինակից
4. Թեմատիկ նկարչություն

26 **Որտեղից է ծագել գոբելեն անվանումը**

1. Գոբելեն թելատեսակից
2. Գոբելեն գույնից
3. Գոբելեն ազգանունից
4. Գոբելեն բնակավայրից

27 **Ինչու են XVII դարի Հոլոնդիայի արվեստագետներին կոչել «Փոքր հոլանդացիներ»**

1. Սակավաթիվ նկարներ ստեղծելու համար
2. Փոքր բնակավայրերում ապրելու համար
3. Կարճահասակ լինելու համար
4. Փոքրաչափ նկարներ ստեղծելու համար

28 **Հունական ճարտարապետության մեջ որ կերպարներն էին կոչվում Ատլանտներ**

1. Տղամարդկանց այն արձանները, որոնք բերվում էին հռոմեական կայսրությունից և տեղադրվում հունական ճարտարապետական կոթողներում՝ վերջինիս տալով հունահռոմեական ճարտարապետական ոճ
2. Տղամարդկանց այն արձանները, որոնք տեղադրվում էին սյուների փոխարեն և պահում էին շինության ծածկը, պատշգամբը, սյունասրահը
3. Տղամարդկանց այն արձանները, որոնք ունեին առնական կառուցվածք և զարդարում էին շինության տարածքը
4. Այն արձանները, որոնք զարդարում էին պալատների նախասրահները, և հանդիսանում էին որպես հունական դիցարանի տարբեր աստվածների կերպարներ

29 **Կերպարվեստի որ տեսակին է պատկանում լինոփորագրությունը**

1. Խճանկար
2. Կոլաժ
3. Հարթաքանդակ
4. Գրաֆիկա

30 **Կերպարվեստ առարկայից ներկայացվող պահանջների համակարգը բաղկացած է**

1. 6 բաժնից
2. 8 բաժնից
3. 2 բաժնից
4. 4 բաժնից

31 **Հայազգի որ ճարտարապետն է վերականգնել Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) Սբ. Սոֆիայի տաճարի գմբեթը**

1. Դանիել
2. Տրդատ
3. Մանուել
4. Մոմիկ

32 **Որ ժամանակաշրջանի արվեստին է բնորոշ քրիստոնեական թեմաները**

1. Վերածնունդ
2. Անտիկ
3. Ռոկոկո
4. Իմպրեսիոնիզմ

33 **Ինչ է նշանակում «սֆումատո» տերմինը**

1. Մարդկային դիմանկարի հոգեբանական արտահայտությունը կերպարվեստում
2. Աստվածաշնչյան թեմաների պատկերազարդումը միջնադարյան եկեղեցիներում և ձեռագիր մատյաններում
3. Պատկերային ձևերի առանձնահատուկ որակ, մոդելավորման փափկություն, տոնային և ուրվագծերի նուրբ անցումներ, անորոշության, մշուշանման և թափանցիկության տպավորություն
4. Մարդու և բնության կապը ու փոխհարաբերությունը կերպարվեստում

34 **Որ արվեստագետը չի համարվում սյուրռեալիզմի ներկայացուցիչ**

1. Մաքս Էռնստ
2. Գուստավ Կլիմտ
3. Ռենե Մագրիտ
4. Անդրե Բրետոն

35 **Որտեղ է գտնվում Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» աշխատանքը**

1. Միլանի Սանտա Մարիա դելլե Գրացիե տաճար
2. Ֆլորենցիայի Պալացցո Մեդիչի-Ռիկկարդի
3. Վատիկանի քրիստոնեական թանգարան
4. Ֆլորենցիայի Պալացցո Վեկկիո

36 **ԽԻԿ համակարգը կիրառվում է**

1. Գնահատման չափանիշներ կազմելիս
2. Ամփոփիչ հաշվետվություն կազմելիս
3. Դասի պլան կոնսպեկտ կազմելիս
4. Տարվա օրացուցային պլան կազմելիս

37 **Պատկերում որոշակի կոլորիտի ստեղծումն ապահովվում է**

1. Երանգի նկատմամբ գույնի գերակշռությամբ
2. Միմյանց փոխլրացնող գույների շեշտադրմամբ
3. Լրացուցիչ գույների ներդաշնակությամբ
4. Գուներանգային հակադրությունների առկայությամբ

38 **Որոնք են ծիածանի գույները**

1. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, սպիտակ
2. Կարմիր, դեղին, գազարագույն, մանուշակագույն, կանաչ, կապույտ, մոխրագույն
3. Կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն
4. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագուն, մանուշակագույն, փիրուզագույն

39 **Կերպարվեստի դասավանդման առաջատար սկզբունք է համարվում**

1. Նորարարությունը
2. Փորձարարությունը
3. Ձննողականությունը
4. Օպտիմալացումը

40 **Ինչպես է անվանվում գեղանկարչական այն ժանրը, որտեղ նատյուրմորտում բացի տվյալ ժանրին բնորոշ առարկաներից, պատկերված են լինում զանգ, գրքեր, սպանված թռչուններ**

1. Դիպտիխ
2. Բազիլիկ
3. Պանո
4. Վանիտաս

41 **Աշխատանքի գրագետ վերլուծության համար առաջնահերթ ինչպիսի կարողություններ պետք է զարգացնել**

1. Հաղորդակցական կարողություն
2. Հուզազգայական արտահայտում
3. Տեսողական ընկալում
4. Վերլուծական մտածողություն

42 **Ինչպես են միջազգային տերմինով թարգմանաբար կոչվում մարտանկարիչները**

1. Տաշիստ
2. Դադաիստ
3. Բատալիստ
4. Ֆովիստ

43 **Ով է Երևանի Խ. Աբովյանի անվան պուրակում տեղադրված Խ. Աբովյանի հուշարձանի հեղինակը**

1. Յուրա Մինասյան
2. Սուրեն Ստեփանյան
3. Արա Հարությունյան
4. Գետիկ Բաղդասարյան

44 **Ինչպես է անվանվում կենցաղային իրերի, թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կերպարվեստում**

1. Օֆորտ
2. Մոնոտիպիա
3. Էստամպ
4. Կոլաժ

45 **Ով է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի նկարազարդման հեղինակը (1963-1965 թթ.)**

1. Մինաս Ավետիսյան
2. Լևոն Մանասերյան
3. Գրիգոր Խանջյան
4. Հակոբ Կոջոյան

46 **Նշվածներից որն է համարվում ուսումնական խնդիր**

1. Կարողությունների ձևավորում
2. Երևակայության զարգացում
3. Բնօրինակից նկարչություն
4. Տարածության արտահայտում

47 **Ով է «Մտածողը» բրոնզաձույլ ստեղծագործության հեղինակը**

1. Ժան Կարպո
2. Արիստիդ Մայոլ
3. Էմիլ Բուրդել
4. Օգյուստ Ռոդեն

48 **Աշակերտների մոտ կերպարվեստային գործունեության ինչպիսի ընդունակությունների զարգացումն է ապահովում ինքնուրույն ստեղծագործական գործունեություն**

1. Զննողական վերաբերմունք
2. Իրապաշտական վերարտադրություն
3. Ստեղծագործական ընկալում
4. Գեղագիտական պահանջմունք

49 **Ով է Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը**

1. Արշամ Շահինան
2. Տարիել Հակոբյան
3. Արա Սարգսյան
4. Ղուկաս Չուբարյան

50 **Առաջադրանքներ կազմելիս որը չի համարվում կարևորագույն գործոն**

1. Առաջադրանքի տեսակ
2. Առաջադրանքի թեմա
3. Առաջադրանքի չափ
4. Առաջադրանքի խնդիր

51 **Որ ճարտարապետն է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի հեղինակը**

1. Արթուր Մեսչյան
2. Ռաֆայել Իսրայելյան
3. Թորոս Թորամանյան
4. Մարկ Գրիգորյան

52 **Կերպարվեստի դասավանդման գործընթացում մանկավարժի գործնական ցուցադրումը օգնում է**

1. Աշակերտներին ուղղորդել ընդօրինակել
2. Աշակերտներին զերծ պահել սխալներից
3. Աշակերտներին սովորեցնել ճաշակ
4. Աշակերտներին ցուցադրել մեթոդները

53 **Ով է հին հունական դիցաբանության պանթեոնի օվկիանոսների աստվածը, ում նաև անվանում էին «Ծովի Աստված»**

1. Ապոլլոն
2. Պոսեյդոն
3. Զևս
4. Հերմես

54 **Ըստ առարկայական չափորոշչի և ծրագրի, նշվածներից որը ուսումնական գործընթացի տեսակ չէ**

1. Պատկերագրական գործունեություն
2. Խաղային գործունեություն
3. Խմբային գործունեություն
4. Անհատական գործունեություն

55 **Որ գեղանկարչի վրձնին է պատկանում «Իվան Ահեղն ու նրա որդի Իվանը» կտավը:**

1. Իսահակ Լեվիտան
2. Իլյա Ռեպին
3. Վալենտին Սերով
4. Վասիլի Պոլենով

56 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների մակարդակ չէ**

1. Հիմնական մակարդակ
2. Առավելագույն մակարդակ
3. Նվազագույն մակարդակ
4. Միջին մակարդակ

57 **Որ դարի աշխատանք է համարվում Գառնու տարածքի բաղնիքի խճանկար Հատակը**

1. 3-րդ դար
2. 4-րդ դար
3. 1-ին դար
4. 2-րդ դար

58 **Ուսումնական նյութի ուսումնասիրությունը սովորողների համար հնարավորություն կընձեռի**

1. Ինքնուրույն կազմակերպել սեփական ուսումնական գործընթացը
2. Ձևավորել գիտելիքները ինքնուրույն կիրառելու մոտեցումներ
3. Ինքնուրույն արտահայտել չափորոշիչային վերջնարդյունքները
4. Զարգացնել ինքնուրույն գործունեություն իրականացնելու կարողությունները

59 **Որն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը**

1. Ուսումնառությունը պլանավորելու գործոն
2. Երևակայական մտածելակերպի զարգացում
3. Տեղեկատվության այլընտրանքային աղբյուր
4. Աշակերտների գիտելիքների ստուգում

60 **Որը չի համարվում ուսումնական գործընթացի պարտադիր պլանավորման գործոն**

1. Առարկայական ծրագիր
2. Արտադպրոցական պարապունքներ
3. Տարվա օրացուցային պլան
4. Դասի պլան կոնսպեկտ

61 **Որը չի հանդիսանում պուրակներում տեղադրված քանդակների նպատակ**

1. Դաստիարակչական
2. Կիրառական
3. Ճանաչողական
4. Գեղագիտական

62 **Որն է համարվում Մարտիրոս Սարյանի առաջին շրջանը**

1. Հայկական բնաշխարհ
2. Վերացական պատկերներ
3. Արևելյան տեսարաններ
4. Երազներ և հեքիաթներ

63 **Հանրակրթական դպրոցում նշվածներից որն է համարվում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Բնօրինակից նկարչություն
2. Երևակայության զարգացում
3. Կարողությունների ձևավորում
4. Տարածության արտահայտում

64 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին ըստ իրենց գեղանկարչական ուղղությունների**

1. Անրի Մատիս
2. Վինսենթ վան Գոգ
3. Ժորժ Սյորա
4. Պոլ Սեզան

Էքսպրեսիոնիզմ ☐
Պուանտելիզմ ☐
Կուբիզմ ☐
Ֆովիզմ ☐

65 **Նշված տերմինները համապատասխանեցրեք իրենց բնութագրերին**

1. Պլեներ
2. Էսքիզ
3. Ռեֆլեքս
4. Գրիզայլ

Գեղարվեստական ստեղծագործության նախանկար ☐
Առարկայի վրա լույսի անդրադարձում ☐
Բացօթյա նկարչություն ☐
Մեկ գույնի տարբեր երանգներով կատարված աշխատանք ☐

66 **Համապատասխանացնել հեղինակներին ըստ իրենց հիմնադրած ժանրերի հայ կերպարվեստում**

1. Գևորգ Բաշինջաղյան
2. Զաքար Զաքարյան
3. Վարդգես Սուրենյանց
4. Հակոբ Հովնաթանյան

Դիմանկարի ժանր ☐
Նատյուրմորտի ժանր ☐
Բնանկարի ժանր ☐
Պատմական ժանր ☐

67 **Որ հայ նկարչի կեղծանունն է համապատասխանում նշված անուն ազգանունների**

1. Հովհաննես Սեմերջյան
2. Գևորգ Գրիգորյան
3. Ոստանիկ Ադոյան
4. Գառնիկ Զուլումյան

Զոտտո ☐
Արշիլ Գորկի ☐
Ժանսեմ ☐
Գառզու ☐

68 **Գտնել համընկումները**

1. Գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն
2. Գունավոր քարերով պատկերված ստեղծագործություն
3. Գունավոր, թափանցիկ ապակու կտորներով հորինվածք
4. Ձեռքով գործված ստեղծագործություն

Վիտրաժ ☐
Բատիկ ☐
Խճանկար ☐
Գոբելեն ☐

69 **Համապատասխանեցնել գրքերի նկարազարդման հեղինակներին ըստ իրենց աշխատանքների:**

1. Մարտիրոս Սարյան
2. Գրիգոր Խանջյան
3. Արա Բեքարյան
4. Հակոբ Կոջոյան

Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի» ☐
Եղիշե Չարենց «Երկիր Նաիրի» ☐
Ստեփան Զորյան «Հազարան բլբուլ» ☐
Ավետիք Իսահակյան «Աբու-լալա Մահարի» ☐

70 **Համապատասխանեցնել վերածնունդի շրջանի ստեղծագործությունները ըստ իրենց գտնվելու վայրի**

1. Միքելանջելո Բուոնարոտի «Դավիթ»
2. Սանդրո Բոտիչելլի «Գարուն»
3. Ռաֆայել Սանտի «Սիքստինյան Տիրամայր»
4. Լեոնարդո դա Վինչի «Տիրամայր Լիտտա»

Դրեզդենի հին վարպետների պատկերասրահ	☐
Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժ թանգարան	☐
Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա	☐
Ֆլորենցիայի Ուֆֆիցի պատկերասրահ	☐